ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ԻՄ ՔԱՅԼԸ ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ
ՏԻԿԻՆ Գ. ԵՂԻԱԶԱՐՅԱՆԻՆ

Հարգելի տիկին Եղիազարյան.

Ի պատասխան Ձեր 31.05.2019թ. հ.01/264 գրության՝ տեղեկացվում է, որ Շինարարների փողոցի հ.15 հասցեում գտնվող շենքը հանդիսացել է 4-րդ կարգի վթարային և ՀՀ կառավարության 25.10.2000թ. հ.682 որոշման դրույթների հիման վրա շենքի թվով 34 բնակարանների բնակիչները վերաբնակեցվել են:

Վերաբնակեցման գործընթացի շրջանակներում վերոհիշյալ շենքի բնակիչներին օրենսդրությամբ սահմանված կարգով տրամադրվել են համապատասխան կառուցվածքով /սենյակների թվով/ բնակարաններ՝ տարբեր հասցեներում գտնվող, տարբեր նախագծերով կառուցված շենքերից:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ